Ալեքսանդր Ծատուրյան

Էլ մի՛ խնդրիր . . .

Էլ մի՛ խնդրիր, մանո՛ւկ սիրուն,
Տանջված սրտից քեզ նվեր՝
Ո՛չ երգ այրող, երգ վառվռուն,
Ո՛չ սիրո մեղմ նվագներ…

Ջուր են, հոգյա՛կ, քո խանդալից
Այդ նոր ժըպիտն ու զգվանք.
Դու չես ցրվիլ իմ հեգ սրտից
Ներնգված սիրո տառապանք…

Այն սև օրից, երբ փշրեցիր
Դու հույսերըս ոսկեվառ,
Անկեղծ սերըս անարգեցիր,
Քնարս լռեց քեզ համար:

Այն օրից իմ այրված սրտում
Շիջավ չքնաղ քո պատկեր.
Այժմ անվերջ իմ երգերում
Ես զգվում եմ մի այլ սեր:

Սեր դեպի հոգս ու կարիքի
Քրտինք թափող զավակներ.
Սեր դեպի իմ ստրուկ ազգի

Կյանքը մաշող կապանքներ…

Այդ սերն է ինձ այժմ, ո՛վ կույս,
Ոգևորում, սիրտ տալիս.
Նա՛ է բուռը խանդը հոգույս,
Այրվող նյութը երգերիս…

1890, 10 հունիսի